

ЕВГЕНИЙ РЕЙН

ԵՎԳԵՆԻ ՌԵՅՆ

ФОНАРНЫЙ
ПЕРЕУЛОК

ԼԱՊՏԵՐՆԵՐԻ
ՆՐԲԱՆՑՔԸ

ԵՐԵՎԱՆ



ԳՐԱԿԱՆ ԷՏԱԼՈՆ

2012

ՀՏԴ 821.161.1-1 Ռեյն
ԳՄԴ 84 Ռ-5
Ո326

Գիրքը տպագրվել է Սոնա Վանի հովանավորությամբ


Книга издается при поддержке Соны Ван

Ռեյն Եվգենի
Ո326 Լապտերների նրբանցքը/Ե. Ռեյն.-Եր.:
Գրական էտալոն, 2012, 64 էջ:

Առաջին անգամ հայ ընթերցողին է ներկայացվում ռուս անվանի բանաստեղծ և արձակագիր Եվգենի Ռեյնի բանաստեղծությունների ժողովածուն հայերեն և ռուսերեն լեզուներով:

ՀՏԴ 821.161.1-1 Ռեյն
ԳՄԴ 84 Ռ-5

© Եվգենի Ռեյն
© «Գրական էտալոն», 2012 թ.



Ռուս անվանի բանաստեղծ և արձակագիր Եվգենի Ռեյնը ծնվել է 1935 թ. Լենինգրադում: Նրան համարում են Ա. Ախմատովայի աշակերտը, Ի. Բրոդսկու ընկերն ու ուսուցիչը և Բանաստեղծ` մեծատառով: Դեռևս ԽՍՀՄ տարիներին մասնակցել է «Մետրոպոլ» ոչ պաշտոնական այմանախի ստեղծմանը, որը բնութագրում է Ռեյն ճշմարիտ բանաստեղծ-մտավորականին: Հանրահայտ են նրա «Կամուրջների անունները», «Հայելիների մթութունը», «Ընդդեմ ժամացույցի սլաքի», «Կամարը ջրի վրա», «Մեր դարաշրջանից հետո» և ուրիշ ժողովածուներ: Ռեյնը արժանացել է մի շարք պարգևների` ՌԴ Պետական մրցանակի(1996 թ.), Ցարսկոսելսկյան գեղարվեստական մրցանակի (1997 թ.), Բլոկի անվան մրցանակի (1999 թ.), Պուշկինյան մրցանակի (2003 թ.), իսկ 2012 թ.-ին` ՌԴ «Պոետ» ազգային մրցանակին:

ЗНАКИ БЫТИЯ

Судьбы поэта и его стихотворений отождествляются далеко не всегда. Гораздо чаще бывает наоборот. Стихотворение является знаком жизни, поэт – объектом жизни (= жизнь переживает поэта). В этой очередности несовпадение судеб стихотворений и поэта вполне естественно, тем более, что жизнь не только переживает поэта, но и использует его для воссоздания в качестве знака или системы знаков.

Поэтому говоря о поэте (в данном случае, о Евгении Рейне), правильно абстрагироваться от фактов жизни и сконцентрировать внимание на знаках жизни. В этом случае потеряет важность и значимость как факт издания первого сборника в позднем возрасте, так и замалчивание первостепенного поэта, и в качестве следствия всего этого, расхождение времени поэта и времени стихотворений, что стало величайшей трагедией и одним из тысяч подобных преступлений советской литературной действительности. Однако, при всем указанном, это всего лишь факт биографии поэта и литературного процесса: стихотворение видится по ту сторону, за пределами всего этого...

Время и пространство стихотворения иные, потому что в великом эксперименте, поставленном на поэте, интересна не действительность, а превращения, метаморфозы. В предисловии к “Избранному” Рейна Бродский говорит, что поэта в годы его молодости называли “элегическим урбанистом”, что и, по мнению автора предисловия, является большой метафорой поэзии Рейна. Бродский прав, но – частично. Рейн, конечно, рафинированный урбанист, городской поэт, однако привязывая его исключительно к городу, нельзя сказать и охватить все.

Место проживания поэта или место эксперимента, конечно, город, однако поэзия, являющаяся следствием, трансформацией этого испытания, в качестве системы знаков вскрывает уже совершенно иное временное пространство, которое находится и выше, и вне пределов как собственно города, так и тех или иных чисел и дат.

Знаки города, пусть будет дозволено сказать, являются обратным адресом, написанным на конверте, а в заключенном в конверте письме уже иные знаки – знаки вездесущности и надвременности, которые прочитываются с помощью ключа – обратной связи. В стихотворении, посвященном Довлатову, Рейн делает следующее наблюдение:

Но здесь как-то сподручнее атлантический перелет,
и когда бы стать ангелом на небесном шпиле...

Этот взгляд “ангела на небесном шпиле”, этот взгляд сверху, с небесной выси является не только смотровой площадкой, но и принципом мировосприятия – в результате тех же испытательных трансформаций-метаморфоз. Возможность не ретроспективного охвата жизненного опыта, а жизни, существования сразу в разных временных периодах и пространственных отрезках, - вот результат испытания, и получается, что возложенный на поэта эмпирический опыт преобразуется в эмпирический опыт поэта, поскольку стихотворение-итог утверждает: мы проживаем не одну жизнь, а несколько жизней, причем проживаем их параллельно. Конечно, все начинается со знаков земной биографии “... только там ведь, где сношены сапоги, босоногого детства дается имя...” но затем приходят знаки бытия (и знаки биографии преобразуются в знаки бытия), и создается система знаков, в которой они являются и альфой и омегой, и всем процессом взаимного, двустороннего экспериментаторства.

Я покинул чужие святыни
и последние крохи свои,
чтобы видеть глазами пустыми
обе стороны у колеи.

Вот такое умение видеть, которое приобретается труднейшим накоплением духовного опыта, можно считать кодом поэзии Евгения Рейна. При этом речь идет об умении видеть все и видеть во всех подробностях. Можем, конечно, сказать, что детализация присуща поэзии вообще, однако речь здесь идет не об иллюстративной детализации, а о семантической, смысловой детализации.

Для Евгения Рейна подробность не является деталью образной структуры или осколком, фрагментом мозаики, а самостоятельным и самодостаточным... стихотворением. В том же предисловии говоря о пейзажах Рейна, Бродский отмечает, что их два – исчезающий вдаль образ ленинградских улиц и сплав балтийских и черноморских пределов. Действительно, в смысле подробностей, деталей пейзажи можно считать своеобразной картографией (по стихотворениям Рейна, на мой взгляд, можно в одиночестве бродить в этих просторах и не заблудиться), однако это вовсе не сугубая картография (пусть даже картография души), это еще и подготовка материала для обретения опыта, из которого можно сделать главное обобщение: жизнь не является единственной и однозначной, пространство и время имеют свои бесчисленные параллельные проявления, претворения, где живем все мы и где мы все бесконечно подвергаемся перевоплощениям, метаморфозам: просто для того, чтобы прожить и пережить это, необходимо не только видеть, а созерцать.

Корни неба и земли едины -
скоро в этом убедятся все...
Истребители и серафимы
тарахтят на взлетной полосе.

И видеть мир, и жить только в ретроспективе (в вопросе “элегичности” Бродский абсолютно прав), потому что в процессе обретения эмпирического опыта даже для наблюдательного человека трудно увидеть результат, а после обретения эмпирического опыта или по завершении какого-либо этапа результатом всегда становится поэзия – зримое прошлое. Поэзия Евгения Рейна во всех подробностях, детально, в радости и печали вспоминает все этапы своего эмпирического опыта...

Нерсес АТАБЕКЯН

Перевел Гурген Баренц

ԿԵՑՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Բանաստեղծի ու բանաստեղծության ճակատագրերը միշտ չէ, որ նույնանուն են: Առավել հաճախ՝ հակառակը: Բանաստեղծությունը կյանքի նշանն է, բանաստեղծը՝ կյանքի օբյեկտը (= կյանքը ապրում է բանաստեղծին): Այս հերթակարգում բանաստեղծության ու բանաստեղծի ճակատագրերի չհամընկնումը միանգամայն բնական է, մանավանդ որ, կյանքը ոչ միայն ապրում է բանաստեղծին, այլև օգտագործում է՝ իրեն որպես նշան կամ նշանների համակարգ վերստեղծելու համար:

Ուստի բանաստեղծի (այս դեպքում՝ Եվգենի Ռեյնի) մասին խոսելիս ճիշտ է վերանալ կյանքի փաստերից և կենտրոնանալ կեցության նշանների վրա: Այդ դեպքում ոչ այնքան կարևոր կդիտվի և՛ բանաստեղծությունների առաջին ժողովածուն ուչ տարիքում հրատարակելը, և՛ առաջնակարգ բանաստեղծին լռության մեջ պահելը, և՛ այդ ամենի հետևանք՝ բանաստեղծի ժամանակի ու բանաստեղծության ժամանակի վրիպումը, որը մեծագույն ողբերգություն է ու սովետական գրական իրականության այդպիսի հազարավոր հանցագործություններից մեկը: Սակայն, այդ ամենով, դա ընդամենը բանաստեղծի կենսագրության ու գրական ընթացքի փաստ է. բանաստեղծությունը տեսնվում է անդին...

Բանաստեղծության ժամանակն ու տարածությունը այլ են, որովհետև բանաստեղծի վրա դրված մեծ փորձարարության մեջ կյանքին հետաքրքրում է ոչ թե իրողությունը, այլ փոխակերպումները: Ռեյնի «Հատընտիրի» առաջաբանում Բրոդսկին ասում է, որ երիտասարդ տարիներին նրան «էլեգիկ ուրբանիստ» են կնքել, ինչը և, ըստ առաջաբանի հեղինակի, Ռեյնի բանաստեղծության մեծ մետաֆորն է: Բրոդսկին իրավացի է, բայց՝ մասամբ: Ռեյնը, իհարկե, գտարյուն քաղաքային բանաստեղծ է, բայց նրան բացառապես քա-

ղաքին առնչելով՝ ամբողջը չի ասվի:

Բանաստեղծի կեցավայրը կամ բանաստեղծի վրա դրված փորձի վայրը, անշուշտ քաղաքն է, սակայն այդ փարձարարության արդյունք տրանսֆորմացիան բանաստեղծությունն իբրև նշանների համակարգ հանում է արդեն միանգամայն այլ ժամանակատարածություն, որը և՛ վեր, և՛ դուրս է ինչպես զուտ քաղաքից, այնպես էլ այսինչ ու այնինչ թվականներից:

Քաղաքի նշանները, թող թույլ տրվի ասել, ծրարին գրված հետհասցեն են, իսկ ծրարում ամփոփված նամակում այլ նշաններ են՝ ամենուրեքության և հարաժամանակության նշանները, որոնք ընթերցվում են հետհասցե-բանալու միջոցով: Դովաթովին նվիրված բանաստեղծության մեջ Ռեյնն այսպիսի դիտարկում ունի.

*Բայց այստեղ կարծես օվկիանոսային թռիչքն է հարմար.
հրեշտակի պես թառած երկնքի սուր ծայրածողին...*

Ահա այս «հրեշտակի պես թառած երկնքի սուր ծայրածողին»-ը, այս «վերևից»-ը ոչ միայն դիտակետ է, այլև աշխարհատեսության սկզբունք՝ նույն փորձարարական տրանսֆորմացիաների արդյունքում: Ոչ թե կենսափորձի հետահայաց ընդգրկման, այլ միանգամից տարբեր ժամանակներում ու տարածություններում ապրելու կարելիություն. ահա փորձարարության արդյունքը, և ստացվում է, որ բանաստեղծի վրա դրված գիտափորձը վերածվում է բանաստեղծի գիտափորձի, քանի որ բանաստեղծություն-հանրագումարը փաստում է՝ ոչ թե մեկ կյանք ենք ապրում, այլ՝ մի քանի, ընդ որում՝ զուգահեռ: Իհարկե, ամեն ինչ սկսվում է երկրային=կենսագրության նշաններից («...չէ որ այնտեղ է, ուր մի կյանք առաջ կոշիկ ես մաշել, քո ոտաբոբիկ մանկությանը լոկ անուն տրվելու...»), բայց հետո գալիս են կեցության նշանները (և կենսագրության նշաններն էլ փոխարկվում են կեցության նշանների), ու կառուցվում է նշանների համակարգը, որի մեջ և՛ ալֆան ու օմեգան են, և՛ երկուստեք փորձարարության ողջ ընթացքը.

*Լքեցի օտար սրբությունները,
իմ փշուրներն էլ վերջին լքեցի,
որպեսզի տեսնեմ դատարկ աչքերով
աջն ու ահյակը այս ուղեգծի:*

Տեսնելու ահա այս կարողությունը, որ ձեռք է բերվում հոգու դժվարագույն փորձառությամբ, կարելի է համարել Եվգենի Ռեյնի բանաստեղծության կողը: Ընդ որում, տեսնելու ամեն ինչ և մանրամասն: Կարող ենք, իհարկե, ասել, որ մանրամասները հատուկ են բանաստեղծությանն ընդհանրապես, բայց խոսքն այստեղ ոչ թե իլյուստրացիա-մանրամասնի այլ իմաստակիր մանրամասնի մասին է:

Եվգենի Ռեյնի համար մանրամասնը պատկերադաշտի դետալ չէ կամ խճանկարի բեկոր, այլ ինքնին և ինքնուրույն... բանաստեղծություն: Նույն առաջաբանում խոսելով Ռեյնի բնապատկերի մասին՝ Բրոդսկին նշում է, որ դրանք երկուսն են՝ հեռվում անհայտացող լեռնինգրադյան փողոցների հեռապատկերը և Բալթյան ու Սևծովյան եզերքների խառնուրդը: Իսկապես, մանրամասների առումով բնապատկերները կարելի է յուրատեսակ քարտեզագրում համարել (Ռեյնի բանաստեղծություններով նույնիսկ, իմ կարծիքով, կարելի է մեն-մենակ շրջել այդ տարածքներում ու չմոլորվել), բայց դա զուտ քարտեզագրում չէ (թեկուզև՝ ոգու), այլև փորձանյութի նախապատրաստում, որից արվելու է գլխավոր ընդհանրացումը. կյանքը միակ ու միանշանակ չէ, տարածությունն ու ժամանակն իրենց անհամրելի զուգահեռ գոյություններն ունեն, որտեղ ապրում ենք բոլորս ու անվերջ փոխակերպվում ենք բոլորս. պարզապես դա ապրելու և վերապրելու համար պետք է ոչ թե տեսնել, այլ՝ տեսանել:

*Հող ու երկնքի արմատը նույնն է.
շուտով բոլորը կտեսնեն ստույգ...
Կործանիչներն ու սերովբեները
հռնդում են նույն թռիչքադաշտում:*

Եվ տեսանել ու ապրել միայն հետահայաց («էլեգիկ»)՝ի հարցում

Բրոդսկին բացարձակ իրավացի է), որովհետև գիտափորձի ընթացքի մեջ նույնիսկ տեսանողի համար դժվար է տեսնել արդյունքը, իսկ գիտափորձի կամ դրա որևէ փուլի ավարտից հետո արդյունքը միշտ բանաստեղծություն է՝ տեսանելի անցյալ: Եվգենի Ռեյնի բանաստեղծությունը մանրամասն և դառն ու անուշ է հիշում գիտափորձի բոլոր փուլերը...

Ներսես ԱԹԱԲԵԿՅԱՆ

СТИХИ
В ПЕРЕВОДЕ СОНА ВАН

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՍՈՆԱ ԿԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Было нас, помнится, пять человек,
Двое из морга выходят на снег,
Шапки в руках.
Это обрушилось, то не сбылось,
Но удалось, удалось, удалось
Нам на паях.
То удалось, что в несносном бреду
Мы удержали рычаг на ходу
Всею пятерней.
Вот и открылся нам каменный свод
И указал нам дорогу в обход —
Лаз потайной.
Это был замысел, прочее - плоть.
Вот и пришлось ее перемолоть
На жерновах
Жизни, обиды, удачи, труда,
Чтобы однажды вернуться сюда -
Шапки в руках.

Հինգն էինք, հիշում եմ, հինգ մարդ.
Երկուսը դուրս են գալիս հերձարանից՝ ծյունի վրա,
Գլխարկները պահած ձեռքերի մեջ:
Այս մեկը տապալվեց, մյուսը չկատարվեց,
Բայց հաջողվեց, հաջողվեց, հաջողվեց
Ամենքիս համար-միասնաբար:
Այն հաջողվեց, որ զառանցանքի մեջ անասելի
Պահեցինք մենք բռնակը արգելակի ընթացքի մեջ,
Մեկտեղ, հինգովս միասին:
Ահա և բացվեց քարե կամարը մեզ
Եվ ցույց տվեց ճանապարհը տեղ հասցնող –
Գաղտնի ճեղքը:
Սա նախագիծն էր – մնացածը՝ մարմին միայն:
Եվ հարկ եղավ աղալ այն
Երկանքի տակ.
Կյանքեր, վիրավորանք, գործ, հաջողություն,
Որպեսզի մի օր վերադառնանք այստեղ –
Գլխարկները պահած ձեռքներիս մեջ:

ФОНАРНЫЙ ПЕРЕУЛОК

всем Штернам, с неизбывной любовью

Огромный, круглый стол и пол-окна,
Буфет, похожий на собор двуглавый,
И переулкa темная стена —
Вот здесь мы собирались всеи оравой.
Хозяика, танцевавшая чарльстон,
И дочь-очкарик, да и зять-очкарик,
Разболтанный, но громкий патефон,
Герой-любовник — Драгоманов Алик.
Большой плакат: «Все будет хорошо!»
Горячие пельмени под сметану...
Достаточно, чего же нам еще?
Я это вспоминать не перестану.
Покойный кинорежиссер Илья,
И будущий нобелиат острили,
Конферансье здесь выступаю я —
Мы, как к себе, в квартиру приходили.
Еще никто не собирался в путь,
В Нью-Йорк, в Париж, в чужое захолустье,
И надо было только намекнуть,
Что завтра будет лучше, много лучше.
Мне не забыть Фонарный никогда,
Снимаю кепку, слезы вытираю.
Сегодня или завтра — навсегда
Явлюсь туда, и снопа все узнаю.
Опять пластинка запоет чарльстон,
Опять отец заговорит о прошлом,

ԼԱՊՏԵՐՆԵՐԻ ՆՐՔԱՆՅՔԸ

Բոլոր Շտեռներին՝ անմար սիրով

Հսկա կլոր սեղան ու կես-պատուհան,
Բուֆետ, ինչպես տաճար երկզխանի,
Եվ նրբանցքի մութ պատը –
Հենց այստեղ էլ խմբվում էինք ողջ ոհմակով:
Չառլստոն պարող տանտիրուհին,
Ակնոցավոր դուստրը և փեսան նույնպես ակնոցավոր,
Քանդված, բայց բարձրաձայն է պատեֆոնը,
Հերոս-սիրեկանը՝ Ալիկը Դրագոմանով:
Մեծ ցուցանակ. «Ամեն բան լավ կլինի»:
Տաք պեյմենին, թթվասերով ծածկված...
Բավական է, ուրիշ էլ ի՞նչ ուզենք:
Ես չեմ դադարելու երբեք այս հիշելը:
Հանգուցյալ կինոբեմադրիչ Իլյան,
Եվ ապագա Նոբելիստը սրամտում էին,
Այստեղ ես եմ որպես կոնֆերանսյե,
Մենք մտնում էինք բնակարան, ինչպես մեր տուն:
Դեռ ոչ ոք չէր պատրաստվում ճամփա ընկնել
Նյու Յորք, Փարիզ, մի ծմակ տեղ,
Եվ սոսկ ակնարկել էր պետք,
Որ վաղը ավելի լավ, շատ ավելի լավ կլինի:
Չեմ մոռանա երբեք նրբանցքը լապտերների,
Ես հանում եմ կեպիս, սրբում արցունքներս:
Այսօր կամ էլ վաղը, անվերջորեն
Կհայտնվեմ այնտեղ ու կիմանամ ողջը առաջվա պես:
Նորից Չառլստոն կնվագի սկավառակը,
Հայրս նորից կսկսի պատմել անցյալը իր,

Опять со всех подветренных сторон
Повеет неизбывным и хорошим.
Опять я стану врать или дуришь,
Припоминать катрены Гумилева,
Нам остается только ждать и жить.
А жизнь — вот здесь. Она на все готова.

Նորից չորս կողմից կփչեն քամիները
Հավերժական ու լավ ինչ-որ բանով:
Նորից կսկսեն ես ստել կամ հիմարացնել,
Հիշել քատրենները Գումիյովի,
Մեզ մնում է միայն սպասել և ապրել:
Իսկ կյանքն ահա այստեղ է: Պատրաստ ամեն ինչի:

И. Бродскому

Придет апрель, когда придет апрель,
давай наденем старые штаны,
похожие на днища кораблей,
на вывески диковинной страны.
О, милый, милый, рыжий и святой,
приди ко мне в двенадцатом часу.
Какая полночь! Боже, как светло!
Нарежем на дорогу колбасу,
положим полотенца и - конец.
Какое нынче утро нас свело!
Орган до неба, рыжий органист,
играй мне в путь, пока не рассвело.
Так рано, до трамваев и авто
мы покидаем вялый городок.
Та жизнь уже закончена, зато
нас каменный ласкает холодок.
Какое путешествие грозит:
за черной речкой бледные поля.
Там тень моя бессонная сквозит.
Верни ее - она жена твоя.
Садись-ка, рыжий, в малый свой челнок,
за черной речкой - тьма и черный свет,
за черной речкой там черным-черно,
что одному пути обратно нет.
Я буду ждать вас, сколько надо ждать,
пока весло не стукнет по воде,
я буду слезы жалкие глотать

Ի. Բրողսկուն

Ապրիլը կգա, երբ կգա՛ ապրիլը,
Եկ հագնենք մեր հին փոխանները,
Նման նավերի փորատակին կախված
Չճանաչված երկրի պաստառներին:
Օ՛, քնքուշ, քնքուշ, կյաժգլուխ և սուրբ,
Եկ ինձ մոտ ժամը տասներկուսին:
Ինչպիսի՛ կեսգիշեր է: Աստվա՛ծ, ի՛նչ լուսավոր է:
Կտրատենք երշիկը ճանապարհի համար,
Սրբիչ վերցնենք – ու վերջ:
Այս ի՛նչ առավոտ է մոտեցրել մեզ:
Երգեհոնը հասնում է երկնքին, կյաժ երգեհոնահար,
Նվագի՛ր ճանապարհիս, քանի լույս չէ:
Դեռ շուտ է, տրամվայ և ավտո չկա.
Մենք լքում ենք քաղաքը անկյանքացած:
Այն կյանքն ավարտված է, բայց հո՛
Մեզ դեռևս շոյում է քարե ցուրտը:
Ի՛նչ ճամփորդություն է սպառնում մեզ.
Սև գետակից այնկողմ՝ դժգույն դաշտեր:
Անքուն ստվերն է իմ անցնում այնտեղ:
Վերադարձրո՛ւ նրան – նա քո կինն է:
Ապա նստի՛ր, կյաժո, նավակը քո փոքրիկ,
Սև գետակից այնկողմ խավար և լույս է սև,
Սև գետակից այնկողմ սև-սև է անթափանց,
Եվ մեկ անձի համար դարձի հնար չկա:
Կսպասեմ ձեզ այնքան, որքան պետք է սպասեմ,
Քանի թիակը դեռ չի հարվածել ջրին,
Ես կույ կտամ իմ խեղճ արցունքները

и привыкать к послушной глухоте!
Но ты вернешься, рыжий, словно пес,
небесный пес, карающий гремя.
«Я нес ее, — ты скажешь, — слышишь, нес?
Но нет ее, и не вини меня».
Тогда пойдём вдоль этих тяжких вод
туда, где по рассказам свел Господь
людей-енотов, ящери-народ
и племя, пожирающее плоть.

Ես կվարժվեմ հլու խլությանը:
Սակայն դու ետ կգաս, կյաժ, ինչպես շունը՝
Հանց դղրդոցով պատժող երկնային շուն:
«Նրան ես բերում էի, - կասես – լսո՞ւմ ես, բերում էի,
Բայց նա չկա ու ինձ չմեղադրես»:
Այդժամ կզնանք այս ծանր ջրերի երկայնքով
Այնտեղ, ուր ըստ պատմության՝ տարավ Աստված
Մարդ-ջրարջին, մողես-ժողովրդին
Եվ ցեղին՝ մարմինը հոշոտող:

РЕСТОРАН “РУССКИЙ САМОВАР” В НЬЮ-ЙОРКЕ

Роману Каплану

Краснокожий как будто индеец и узкий китаеобразно,
в тесноте, не в обиде витаешь ты духом соблазна,
в мировой суете, средь мышино́й погони вселенско́й,
благодатный тупик за двустворчатой дверью железной.

Тут уже не спешат, не торопят ни счета, ни спора,
здесь последний приют, зазеркалье, но здесь и опора
между рюмкой и вилкой, холодцом и селедкой по-русски,
если кончена жизнь, то начнем ее снова с закуски.

Неужели я снова на этом усядусь диване
и зайду, никому не сказавши и слова заране,
потому, что мое здесь от века законное место,
потому, что здесь память диктует, а не воет блатная
фиеста.

Здесь и затормошат, и, быть может, оставят в покое,
поцелуют и плюнут и, наверно, напомнят такое,
отчего попросить надо стопку и стукнуть о стопку
и последнюю щепку ничуть не жалеть на растопку.

Потому, что ночами пируют здесь милые тени,
только дверь запирают, как вступают они во владенье
этой бывшей земли, безутешной, безрадостной пьянки,
где бренчит пианист до рассвета “Прощанье славянки”.

«ՌՈՒՄԿԻ ՍԱՄՈՎԱՐ» ՌԵՍՏՈՐԱՆԸ ՆՅՈՒՅՈՐՔՈՒՄ

Ռոման Կապլանին

Կարմրամորթ, ինչպես հնդկացի և շեղաջ` չինացու պես,
Նեղ տեղում, բայց ո՛չ նեղացած ես ճախրում դու ոգով
գայթակղության`

Աշխարհի ունայնի մեջ և մկնավագքի միջով տիեզերքի,
Բարեբեր փակուղին երկաթյա երկփեղկ դռան ետևում է:
Այստեղ չեն շտապեցնում այլևս ո՛չ հաշիվները, ո՛չ էլ վեճերը,
Աստ վերջին հանգրվանն է, վերջը անդրադարձի, բայցև հենարանը
Գավաթի և պատառաքաղի միջև, դոնդողի և ռուսական սեյրոկայի,
Եթե վերջացած է կյանքը, ապա այն կսկսենք կրկին նոր խորտիկից:
Մի՞թե առաջվա պես կնստեմ ես նորից բազմոցին այս
Ու ներս կգամ նախապես ոչ մի բառ չասած և ոչ մեկին,
Քանզի մի դար է արդեն այս տեղը իմն է օրինական,
Քանի որ հիշողությունն է թելադրում այստեղ, ոչ թե ոռնում է
բլատնոյ ֆիեստան:

Այստեղ քեզ կխանգարեն, գուցեև հանգիստ թողնեն,
Կհամբուրեն, կթքեն և հավանաբար կհիշեցնեն մի բան,
Որի համար պիտի խնդրես հարյուր մի ու խփես բաժակին`
Չափսոսալով ծեղն անգամ վերջին - ինքնառեռի բոցին:
Քանի որ գիշերներով այստեղ խնջույք են անում սիրելի շուքերը,
Միայն դուռն են կողպում, հենց մտնում են խռովյալ,
Երբեմնի այդ հողի անխինդ արբեցումի տիրույթները,
Ուր դաշնակահարը ծլնգացնում է «Պռոշչանիե սլավյանկի»-ն
մինչև լույս:

СТИХИ
В ПЕРЕВОДЕ НЕРСЕСА АТАБЕКЯНА

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՆԵՐՍԵՍ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՐ

ПЕРВОЕ ИЮНЯ

Что сегодня? Первое июня -
первое июня навсегда!
В доме спят, и светом полнолуныя
черная заполнена вода.
Поезда перебегают к югу,
промывает небеса Гольфстрим...
Протяни во сне, товарищ, руку,
этой ночью мы поговорим.
Зеленью, куриной слепотою
зарастает поле под окном.
Первое июня молодое
ничего не знает ни о ком.
Две собаки дремлют на веранде,
птица притаилась под стрехой.
Что же вы, товарищ? Перестаньте
плакать на рассвете. Бог с тобой!
И пока мы не проснемся оба,
дорогой товарищ, лучший друг,
колыбель качается у гроба,
целину распахивает плуг.
Корни неба и земли едины -
скоро в этом убедятся все...
Истребители и серафимы
тархтят на взлетной полосе.

ՀՈՒՆԻՍԻ ՄԵԿԸ

Ի՞նչ օր է այսօր: Հունիսի մեկը –
հունիսի մեկը՝ ընդմիջտ:
Տանը քնած են, ու լուսնի հետքը
փռվել է մթին ջրերին:
Ու գնացքները վազում են հարավ,
Գոլֆստորիմը երկինք է հոսել...
Քնի մեջ, ընկեր իմ, ձեռքով արա,
այս գիշեր դեռ երկար կխոսենք:
Ամալի դաշտը պատուհանի տակ
հավկուրությունն ու խոտը կպատի,
հունիսի մեկը՝ ջահել, անգիտակ,
ոչ մեկի մասին ոչինչ չգիտի:
Բաց պատշգամբում շներն են քնել
ու թռչուններն են սսկվել կտուրին:
Վերջ տվեք, ընկեր, ի՞նչ արցունքներ են,
այս լուսաբացը արատասուք չունի:
Քանի քնած ենք, ու լուռ է չորսդին,
թանկագին ընկեր, իմ լավ բարեկամ,
օրոցքն է ճոճվում դագաղի կողքին
ու խոփն է հերկում հողերը խոպան:
Հող ու երկնքի արմատը նույնն է.
շուտով բոլորը կտեսնեն ստույգ...
Կործանիչներն ու սերովբեները
հռնդում են նույն թռիչքադաշտում:

* * *

Мутно марево. Дали нечетки,
за вагоном глухие снега.
Но великое зренье ночевки
покидаю, стою у окна.
Фонари неприкаянных станций,
неприступные тени лесов
отлетают, как души в пространстве,
набегают, как стрелки часов.
И чем дальше, тем большую ясность
открывает последняя даль -
никогда не проходит опасность,
никуда не уходит печаль.
Все, что есть между тьмою и тьмою, -
только зрение, только окно,
и оно неразлучно с тобою,
но тебе под залог вручено.
И уже не вернешь, не расторгнешь,
погибая в экспрессе ночном;
обрывая под пломбою тормоз,
ты останешься перед окном.
Я покинул чужие святыни
и последние крохи свои,
чтобы видеть глазами пустыми
обе стороны у колеи.

* * *

Պղտոր մառախուղ: Հեռուն՝ անհստակ,
ու խոր ձյուններ են վագոնից անդին:
Գիշերակացի տեսիլքը լքած՝
պատուհանին են սեղմվում անհանգիստ:
Կայարանների լույսերն անտերունջ
և անտառների ստվերներն անտես՝
հոգիներ ասես՝ թռչում են հեռու,
վերադառնում՝ սև սլաքների պես:
Եվ ինչքան հեռու՝ պարզվում է հեռուն,
բացվում է վերջին հեռաստանն ահա,
սակայն վտանգը երբեք չի մարում,
չի լռում թախիժն այս համատարած:
Ամենը՝ մութ ու մթան արանքում,
միայն հայացք է, միայն պատուհան,
և անբաժան է քեզնից ողջ կյանքում,
բայց և քեզ իբրև գրավ է տրված:
Ու հետ չես բերի, չես խզի արդեն
այս ճեպընթացում վախճանդ աղոտ,
արգելակները պոկելով պատից՝
կանգնած կմնաս պատուհանի մոտ:
Լքեցի օտար սրբությունները,
իմ փշուրներն էլ վերջին լքեցի,
որպեսզի տեսնեմ դատարկ աչքերով
աջն ու ահյակը այս ուղեգծի:

* * *

Легкий снежок прогулки
между двумя метро.
Все мы твои придурки,
как без тебя мертво!
Что же? Бери за ворот
и говори: “Люби!”.
Шелковый бант приколот,
только не отступи.
Хочешь - стяну потуже?
Дай - распушу совсем!
Или верни мне душу,
или назначь никем.

* * *

Զբոսանքի ծյունը թեթև
մետրոյից մետրո է ուղեկցում:
Մենք բոլորս քո խենթերն ենք,
առանց քեզ - մե՛ծ մեռելություն:
Դե ինչ, բռնիր օձիքս պինդ,
«Սիրի՛ր» ասա, կկատարեմ:
Ժապավեն եմ փնջել կրծքիս,
միայն խոսքից հետո չկանգնես:
Կուզե՞ս՝ ձգեմ խեղդելու պես,
կուզե՞ս՝ արձակ թողնեմ կրկին:
Մեկ է. միայն հետ տուր հոգիս
կամ ինձ ոչ ոք նշանակիր:

* * *

С.Довлатову

Все те же ионические поленницы в старом окне
подсыхают к отопительному сезону,
еще два-три визита, и вполне
доживешь до заслуженного пенсионера.
И когда я приеду в последний раз,
чемодан подволакивая с отдышкой,
то с порога, как водится, вспомню Вас,
в Вашей комнате, сильно от Вас отвыкшей.
Но здесь как-то сподручнее атлантический перелет,
и когда бы стать ангелом на небесном шпиле,
то увидеть можно среди болот
то чухонское место, где жили-были,
и затем на обратном конце дуги -
безымянный берег в засохшем гриме, -
только там ведь, где сношены сапоги,
босоногого детства дается имя.
Потому и вытягивается губа,
и не можешь позвать и назвать не в силах -
так, в прозрачных сумерках век сгубя,
доживаешь, как мерин, до бредней сивых.
Было время, и мы не сказали: "Ты..."
Календарь закрыт, и не будет завтра,
потому и набиты разлукой рты,
не вкусившие досыта брудершафта.

Ս. Դովլաթովին

Հին պատուհանից՝ նույն իոնական վառելափայտն է
չորանում գալիք ծմռանն ընդառաջ,
մի քանի այց էլ՝ ու հաստատ այստեղ
կյանքով վաստակած թոշակ կստանաս:
Ու երբ այցի գամ ես վերջին անգամ՝
ծանր քարշ տալով ճամպրուկը իմ հին,
Ձեզ պիտի հիշեմ շեմին անպայման
այս նույն սենյակի՝ հետ վարժված Ձեզնից:
Բայց այստեղ կարծես օվկիանոսային թռիչքն է հարմար.
հրեշտակի պես թառած երկնքի սուր ծայրածողին՝
կարող ես տեսնել ճահճուտների մեջ անտրտունջ թաղված
չուխոնական այն եզերքը, որտեղ դեռ ապրում էիր,
հետո աղեղի հակառակ ծայրին կդիտվի արդեն
անանուն ավիը՝ ընդմիշտ չորացած դիմաներկերով,
չէ որ այնտեղ է, ուր մի կյանք առաջ կոշիկ ես մաշել,
քո ոտաբոբիկ մանկությանը լոկ անուն տրվելու:
Դրա համար է դողում շրթունքդ, ու ձայնդ ո՛ւշ է,
չես կարող կանչել և անունը տալ արդեն չես կարող.
այդպես թափանցիկ աղջամուղջի մեջ դարդ կմաշես,
ու մնացյալը կանցնի անանցյալ գառանցանքներում:
Կար ժամանակ, ու իրար այդպես էլ մեր «Դու...»-ն չասացինք,
և օրացույցը փակված է արդեն, վաղվա օր չկա,
դրա համար է մեր բերանները բաժանունով լի,
մեր բերանները՝ բրուդերշաֆտը կիսով ճաշակած:

* * *

Младенчество. Адмиралтейство.
Мои печали утолив,
не расхлебваю дармоедства
всех слов моих у снов твоих.
Вот с обтекаемых ступеней
гляжу на дальние мосты, -
там движется вагон степенный,
назначенный меня спасти.
Возить к раздвоенному дому,
сосватать женщине седой,
пока позору молодому
стоять за утренней слюдой.
Он выследил: нас арестуют
за бессердечие и жар,
в постыдных позах зарисуют,
отпустят, как воздушный шар.
Ударившись о подворотню,
он снова выдаст нас, беда!
Лови меня за отвороты,
тебе в постель, а мне куда?
Согласным берегом куда мне,
рассветной этой чистотой
буксир развесил лоскутами
знак бесконечности с тобой.
Как будто плот органичных бревен,
тая дыхание, поплыл -
со всем, что было, вровень, вровень,
все подбирая, что любил.

* * *

Ծովակալության շենքը: Մանկություն:
Տխրություններս հագեցնելով՝
ծրիակերի վարքը կհսկեմ
բոլոր բառերիս՝ երազներիդ մոտ:
Թաց սանդուղքներից նայում եմ անթարթ
դեռ կամուրջներին հեռու-հեռավոր.
այնտեղ սողում է վագոնը դանդաղ,
որ պիտի փրկի ինձ գալիք մի օր:
Տանի-հասցնի տունը երկատված,
խնամախոսի կնոջն ալեհեր,
քանի դեռ ջահել ամոթն է կանգնած
այգաբացի գորշ փայլարի հետև:
Նա հետևել է. մեզ կկալանեն
անսրտության ու մեղքի համար շոգ,
խայտառակ դիրքում մեզ կնկարեն,
փուչիկների պես մեզ կարծակեն օդ:
Դարպասատակին ցավոտ խփվելով՝
դարձյալ կմատնի նա մեզ. փորձա՛նք է:
Բռնիր օձիքս ու էլ բաց մի թող.
դու՝ անկողին, իսկ ե՞ս ուր պարտակվեմ:
Ո՞ւր գնամ այս խուլ ափին համաքայլ,
երբ լուսաբացի մաքրությանն ի տես
քարշակն է կախել հավիտենության
նշանը քեզ հետ՝ ծվենների պես:
Ու երգեհոն էր լաստը, որ անցավ՝
շունչը պահած իր գերաններում հին,
եղած-անցածին համահավասար,
տանելով ողջը, որ սիրում էի:

* * *

В провинциальном городе чужом,
Когда сидишь и куришь над рекою,
Прислушайся и погляди кругом -
Твоя печаль окупится с лихвою.

Доносятся гудки и голоса,
Собачий лай, напевы танцплощадки.
Не умирай. Доступны небеса
Без этого. И голова в порядке.

* * *

Օտար քաղաքում գավառական
երբ որ ծխելիս լինես գետափին,
աչք գցիր շուրջդ, ականջ դիր,- հաստատ
կհատուցվի քեզ հազարապատիկ:

Ձայներ են հասնում, շչակներ, հեռվից՝
շան հաչոց է ու պարի եղանակ:
Չմեռնես: Երկինքն հասանելի է
առանց դրա էլ: Գլուխդ՝ վրադ:

* * *

Само́й природы вечный меньшевик*,
давным-давно я от себя отвык:
ни шулки, ни попойки - Иегова
лишил меня на партсобрание слова,
еще немного - и лишит мандата...
Ну что ж такого, жизнь не виновата.
Зна́й плещет у метро, стоит ретиво
в затылок, возле кооператива.
Зачем? Сама не знает. Что-то будет...
Пусть не признает, плюнет, обессудит
и пригвоздит, поставит в списке птичку,
но только даст мне верную отмычку:
о чем она рыдает и хлопочет -
никто не хочет жить и умереть не хочет.

* Строка из стихотворения О. Мандельштама "Полночь в Москве.
Роскошно буддийское лето...".

* * *

Հենց իր՝ բնության հավերժ մենշնիկ*,
վաղուց-վաղուց եմ հետ վարժվել քեզնից.
ոչ մի կատակ ու խմիչք - Եհովան
ծայնագուրկ արեց ինձ կուսժողովում,
էլի մի քիչ՝ ու մանդատս կառնեմ...
Արտակարգ՝ ոչինչ, կյանքը մեղք չունեմ.
նայիր, ծփում է մետրոյի դիմաց,
շնչում ծոծրակիս, բոթբոթում կամաց:
Ու սպասում է: Ինչի՞ն: Չգիտի:
Թող չընդունի ինձ, թող դատապարտի,
թող անարգանքի սև սյունին գամի,
միայն՝ հուսալի ագռավուկ տա ինձ.
Ինչո՞ւ է լալիս, չարչարվում իզուր՝
ոչ ոք ապրել ու մեռնել չի ուզում:

** Օ. Մանդելշտամի «Մոսկվայում՝ կեսգիշեր: Շքեղ է բուդդայական
ամառը...» բանաստեղծության տողը*

СТИХИ
В ПЕРЕВОДЕ ШАНТА МКРТЧЯНА

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՇԱՆԹ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

* * *

А.А.Ахматовой

У зимней тьмы печали полон рот,
Но прежде, чем она его откроет,
Огонь небесный вдруг произойдет -
Метеорит, ракета, астероид.

Огонь летит над грязной белизной,
Зима глядит на казни и на козни,
Как человек глядит в стакан порожний,
Уже живой, еще полубольной.

Тут смысла нет, и вымысла тут нет,
И сути нет, хотя конец рассказу.
Когда я вижу освещенный снег,
Я Ваше имя вспоминаю сразу.

* * *

Ա.Ա. Ախմատովային

Ձմռան խավարի բերանը թախիծով է լեցուն,
Բայց մինչև նա իր բերանը կբացի,
Երկնային հուրը հանկարծ կտարածի
Գիսավոր, հրթիռ, քարեր երկնածին:

Հուրը սուրուն է գարշ, ճերմակ երեսին,
Ձմեռն է նայում մահվան ցավ ու դավին,
Ինչպես մարդ կնայի բաժակի մեջ սին,
Արդեն կենդանի, սակայն կեսհիվանդ:

Այստեղ չկա իմաստ և չկա ստություն,
Թեև վերջն է խոսքիս, չկա և էություն:
Երբ որ տեսնում եմ պայծառակերպ ծյունը,
Ես իսկույն հիշում եմ Ձեր անունը:

В НОВУЮ АНГЛИЮ

И. Б.

На первом этаже выходят окна в сад,
Который низкоросл и странно волосат
От паутины и нестриженных ветвей.
Напротив особняк, в особняке детсад,
Привозят в семь утра измученных детей.
По́ими меня хоть ты, мой лучший адресат!

Так много лет прошло, что наша связь скорей
Психоанализ, чем почтовый разговор.
Привозят в семь утра измученных детей,
А в девять двадцать пять я выхожу во двор.
Я точен, как радар, я верю в ритуал -
Порядок - это жизнь, он времени сродни.
По этому всему пространство есть провал,
И ты меня с лучом сверхсветовым сравни!

А я тебя сравню с приветом и письмом,
И с трескотней в ночном эфире и звонком,
С конвертом, что пригрет за пазухой тайком
И склеен второпях слезой и языком.
Зачем спешил почтарь? Уже ни ты, ни я
Не сможем доказать вины и правоты,
Не сможем отменить обиды и нытья,
И все-таки любви, которой я и ты
Грозили столько раз за письменным столом.

ԴԵՊԻ ՆՈՐ ԱՆԳԼԻԱ

Ի. Բ.

Լուսամուտները առաջին հարկի նայում են պարտեզ,
Որը գաճաճ է և տարօրինակ փրչոտ-մազե
Սարդոստայնից ու ճյուղքից չխուզած:
Դեմը՝ մենատուն է, մենատանը՝ մանկապարտեզ,
Առավոտ յոթին բերում են մանկանց հոգնած ու հուզված:
Իմ հասցեատեր, հասկացիր խոսքս, որն ուղղում եմ քեզ:

Մեր կապն առավել, այսքան տարի անց,
Հոգեվերլուծանք, քան թե զրույց է - ծրարում ներփակ:
Առավոտ յոթին բերում են հոգնած ու հուզված մարդկանց,
Ինն անց քսանհինգ ես իջնում եմ բակ:
Ես՝ ճշգրիտ եմ ռադար որպես, հավատում եմ ծիսախաղին-
Կյանքն՝ օրենք ու կարգ, այն՝ ժամանակի ազգակիցն է:
Այդ իսկ պատճառով՝ տարածությունը - ինքն է ձախողում,
Եվ գերլուսային շողի հետ դու ինձ բաղդատես գուցե:

Իսկ ես քեզ՝ ողջույնի հետ կամ էլ նամակի,
Նաև ճթթթիցի հետ գիշերվա եթերում ու նաև զանգի,
Ծրարի հետ, որ թաքուն տաքացվել թևատակին
Եվ շտապ սունձվել է լեզվով ու արցունքով:
Ինչո՞ւ էր փութում փոստատարը: Այլևս ո՛չ դու և ո՛չ էլ ես
Չենք ապացուցի՝ ով էր մեղավոր, ով արդարացի,
Չենք զորի փոխել վիրավորանքներ, թնկթնկոցներս
Եվ, ամեն դեպքում, սերը, որով ես ու դու քանիցս
Գրասեղանի առջևում նստած իրա՛ր ենք սպառնացել:

Моё лучший адресат, напитки и плоды
Напоминают нам, что мы еще живем.
Семья не только кровь, земля не только шлак
И слово не совсем опустошенный звук!
Когда-нибудь нас всех накроет общий флаг,
Когда-нибудь нас всех припомнит общий друг!

Пока ты, как Улисс, глядишь из-за кулис
На сцену, где молчит худой троянский мир,
И вовсе не Гомер, а пылкий стрекулист
Напишет о тебе, поскольку нем умир.

Ի՞նչ հասցեատեր, մրգեղենն ու ոգելիցը
Մեզ հիշեցնում են, որ կյանքից մենք դեռ չենք հեռացել:
Ընտանիքը՝ ո՛չ միայն արյուն է, հողը՝ ո՛չ միայն խարամ
Եվ բառն ամենակին հնչյուն չէ ամայացած:
Երբևէ բոլորիս կհիշեցնի մեր ընդհանուր բարեկամը:
Երբևէ բոլորս ընդհանուր դրոշով կլինենք ծածկված:

Քանի դեռ դու, իբրև Ուլիսը, կնայես ետևից կուլիսի
Բեմին, ուր մո՛ւլնջ է տրոյական աշխարհը նիհար,
Եվ ամենակին ո՛չ Հոմերոսը, այլ գրամոլը պորթկալիս
Կգրի քո մասին, որքանով Կո՛ւռքը համր է հար:

ПРО ВОРОНА

Там, где мусорные баки цвета хаки
На Волхонке во дворе стоят в сторонке,
Обитает юный ворон, он проворен.
Он над баками витает и хватает
Апельсиновую дольку, хлеба корку,
А потом попьет из лужи и не тужит.
Он мрачнее, но прочнее человека,
Он-то знает, что прожить ему два века.
И увидит он большие перемены,
Неприменно их увидит, непременно.

ԱՌ ԱԳՈՒՎ

Այնտեղ, ուր բաքերն են աղբի գույնով խակի
Դրված մի կողմ Վոլխոնկայի մի բակում,
Պատանի ագռավն է ճարպիկ բնակել:
Նա բաքերի վրա սահանքում է, ճանկում
Նարնջի մի կտոր, հացի կողը չոր,
Իսկ հետո՝ խնում ջրափոսից ու չի՛ մրսում:
Նա՛ առավել խոժոռ է, բայց պինդ է ժայռ մարդուց,
Դե գիտի, որ ապրելու է երկու դարն իր անպարտ,
Եվ տեսնելու է նա վիթխարի փոփոխություններ,
Անպատճառ տեսնելու է նա, անփոփոխելին:

ЭЛЕКТРИЧКА 0.40

В последне́й пусто́й электричке
По́ими за пята́дцать минут,
Что прожил ты жизнь по привычке,
Кончается этот маршрут.

Выходишь прикуривать в тамбур,
А там уже нет никого.
Пропро́ца споко́йный, как ангел,
Тулуп расстелил наголо.

И видит он русское море,
Стакан золотого вина.
И слышит, как в белом соборе
Его отпевает страна.

ԷԼԵԿՏՐԱԳՆԱՑՔ 0.40

Վերջին էլեկտրագնացքում ամա
Մեկ քառորդ ժամում հասկացիր ուղիղ,
Որ դու ապրել ես քո կյանքն ականա,
Եվ վերջանում է այս երթուղին:

Գնում ես տամբուրում ծխելու,
Իսկ այնտեղ՝ ոչ մի մարդ չիք արդեն:
Քանց հրեշտակը հաշտ է արբենուլը,
Փռած քուրքի վրա չի ուզում զարթնել:

Եվ ռուսական ծովն է նա տեսնում,
Մի բաժակ գինի ոսկեցուլ:
Ու լսում, թե ճերմակ տաճարում ինչպես է,
Երկիրը պատարագ իրեն մատուցում:

"MELENCOLIA"
ГРАВИЮРА АЛЬБРЕХТА ДЮРЕРА

Подойди к подоконнику,
Обопрись, закури.
Теплота потихонечку
Растворится в крови.

Все тесней и мучительней,
Все сильней и больней,
Глубже и возмутительней,
Лучше, больше, умней.

Чудеса меланхолии
Окружают тебя.
Волоски колонковые
Украшают тебя.

Хочешь - маслом и темперой,
Хочешь - сильным резцом, -
Но чем дальше, тем жертвенней
Связь твоя с образцом.

На гравюре у Дюрера,
Где волшебный квадрат.
Только, чур его, чур его!
А не то - замудрят

ԱԼԲՐԵՆՏ ՂՅՈՒՐԵՐԻ «MELENCOLIA» ՓՈՐԱԳՐԱՆԿԱՐԸ

Մոտ եկ պատուհանի գոգին,
Ջերմ առ, ծխախոտ կպցըրու:
Քիչ-քիչ ալիքները տաքի
Քո արյունի նե՛րսը լցրու:

Գերհեղձուկ է ու չարչարող,
Ահագնացող ու ցավագին,
Վրդովեցնող ու խորախոր,
Լա՛վն ավելի, շա՛տ, խելացի՛:

Մելամաղձի հրաշքները
Շրջաբարդո՞ւմ են քեզ,
Մագիկները սյունակային
Գեղազարդո՞ւմ են քեզ:

Տեմպերայով, յուղաներկով,
Կուզես՝ զորավոր կտրիչով,-
Բայց խորն է ու զոհաբերանք
Կապո՛ հենց նմուշի՛ միջով:

Փորանկարին Ղյուրերի,
Ուր հրաշքն է քառակուսին:
Լոկ չխաբվես, խաբվե՛ս ոյուրին.
Թե ոչ՝ խելքից դուրս բան կասեն

Эти числа и символы.
Лучше жить в простоте,
Хоть она непосильнее
Временами, чем те,

Что тесней и мучительней,
Все сильней и больней,
Глубже и возмутительней,
Лучше, больше, умней.

Այս թվերն ու այս նիշերը:
Լավ է ապրել պարզեցված կյանք,
Թեպետև այն՝ ուժից վեր է
Երբեմնակի, քան թե նրանք,

Որ հեղձուկ են ու չարչարող,
Ահագնացող ու ցավածին,
Վրդովեցնող ու խորախոր,
Լա՛վն ավելի, շա՛տ, խելացի՛:

СОДЕРЖАНИЕ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ЗНАКИ БЫТИЯ
Нерсес АТАБЕКЯН

4

ԿԵՑՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ
Ներսես ԱԹԱՐԵԿՅԱՆ

8

СТИХИ
В ПЕРЕВОДЕ СОНА ВАН

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՍՈՆԱ ՎԱՆԻ ԹԱՐԳԱՆՈՒԹՅԱՄԲ

Было нас, помнится, пять человек

14

Հինգն էինք, հիշում եմ, հինգ մարդ

15

Фонарный переулоч

16

Լապտերների նրբանցքը

17

И. Бродскому

20

Ի. Բրոդսկուն

21

Ресторан “Русский самовар” в Нью-Йорке
24

«Ուուսկի սամվար» ռեստորանը Նյու-Յորքում
25

СТИХИ
В ПЕРЕВОДЕ НЕРСЕСА АТАБЕКЯНА

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՆԵՐՍԵՍ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱԲ

Первое июня
28

Հունիսի մեկը
29

Мутно марево. Дали нечетки
30

Պղտոր մառախուղ: Հեռուն՝ անհստակ
31

Легкий снежок прогулки
32

Զրոսանքի ծյունը թեթև
33

С.Довлатову
34

Ա. Դովլաթովին

35

Младенчество. Адмиралтейство

36

Ծովակալության շենքը: Մանկություն

37

В провинциальном городе чужом

38

Օտար քաղաքում գավառական

39

Самоу природы вечный меньшевик

40

Հենց իր` բնության հավերժ մենչևիկ

41

СТИХИ

В ПЕРЕВОДЕ ШАНТА МКРТЧЯНА

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՇԱՆԹ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

А.А.Ахматовоу

44

Ա.Ա. Ախմատովային

45

В Новую Англию
46

Դեպի Նոր Անգլիա
47

Про ворона
50

Առ ագռավ
51

Электричка 0.40
52

Էլեկտրագնացք 0.40
53

"MELENCOLIA"
Гравюра Альбрехта Дюрера
54

Ալբրեխտ Դյուրերի
«MELENCOLIA» փորագրանկարը
55

ЕВГЕНИЙ БОРИСОВИЧ
РЕЙН

ԵՎԳԵՆԻ ԲՈՐԻՍՈՒՍԻ
ՌԵՅՆ

ФОНАРНЫЙ
ПЕРЕУЛОК

ԼԱՊՏԵՐՆԵՐԻ
ՆՐԲԱՆՑՔԸ

Редактор ШАНТ МКРТЧЯН

Խմբագիր՝ ՇԱՆԹ ՄԿՐՏՉՅԱՆ

Изд. редактор

Հրատ. խմբագիր՝

ВАНН ВАРДАНЯН

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Художественное оформление

Գեղարվեստական ձևավորումը՝

КАРЕНА МКРТЧЯНА

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԻ

На обложке: Карен Мкртчян
“Большой круговорот”

Շապիկին՝ Կարեն Մկրտչյան
«Մեծ շրջապտույտ»



ԳՐԱԿԱՆ ԷՏԱԼՈՆ

Издательство

«ԳՐԱԿԱՆ ԷՏԱԼՈՆ»

“ГРАКАН ЭТАЛОН”

հրատարակչություն

375010, Ереван, Туманян 10, кв.34

375010, Երևան, Թումանյան 10, բն.34

Эл. почта: Narcis-handes@mail.ru

Էլ. փոստ՝ Narcis-handes@mail.ru

Տպագրությունը՝ օֆսեթ

Չափսը՝ 60x84 1/16

Թուղթը՝ օֆսեթ

Ծավալը՝ 4 տպ. մամուլ

Տպաքանակը՝ 500

«ԷՂԻԹ ՊՐԻՆՏ» ՍՊԸ

Տպագրատուն

ԵՐԵՎԱՆ

Тупография

“ЭДИТ ПРИНТ”

ЕРЕВАН